# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Պրովիզ ՍՊԸ-ն ՍՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/14 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 34 | - | - | - | - | ԿԱՆԱՑԻ ՁՄԵՌԱՅԻՆ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱԳՈՒՍՏ Նկարագիր Կանացի դասական սպորտային վերնահագուստ /համաձայն հավելվածի /կցվում է/: Տաբատի գոտին 4սմ էլաստիկ, համակցված ժապավենով /կապույտ գույնի/, աջ և ձախ կողմերը գրպաններով /կապույտ գույնի/, ձախ կողմի գրպանի վրա պետք է մետաքսյա թելով ասեղնագործած լինի պատվիրատու կազմակերպության լոգոն և բաժանմունքի համարը /երկարությունը 5սմ, լայնությունը 5 սմ/` երկու գույներով` կապույտ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | (գույնի կոդը PANTONE 2945C) և սպիտակ : Կազմակերպության լոգոյի դիզայնի ֆայլը .pdf ֆորմատով կցվում է: Կոնքամասը նորմայից լայն 10%: Վերնահագուստը երկարաթև, թևերը /կապույտ գույնի/ և ներքևամասը մանժետով /կապույտ գույնի/, ձախ թևի վրա պետք է մետաքսյա թելով ասեղնագործած լինի պատվիրատու կազմակերպության լոգոն և բաժանմունքի համարը /երկարությունը 5սմ, լայնությունը 5 սմ/, գրպաններով /կապույտ գույնի/, փակումը կայծակ-շղթայով և լանջափեշատակով /կապույտ գույնի/, օձիքը կանգունակով /կապույտ գույնի/: Առանձնահատկություններ Բոլոր միացնող կարերը մշակվում են 4 թել մաքրակարով: Բոլոր մշակումները կատարվում են ունիվերսալ մեքենայով: Վերնազգեստի աջ և ձախ կողմերում մշակված են կտրովի գրպաններ: Թևերը և ներքևամասը մշակվում են էլաստիկ մանժետով լայնությունը 5- 6 սմ: Հատվող կարերը ամրակարվում են |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հատուկ նշանակության մեքենայով։ Տաբատի գոտին մշակվում է էլաստիկ ժապավենով լայնությունը 4 սմ և գոտքատեղը հարթակարվում է, որի մեջ տեղադրվում է շարժական ժապավեն։ Տաբատի գրպանները ունեն թեք կտրվածք։ Տոտերը մշակվում են հարթակարով լայնությունը 1.5-1.8սմ ։ Չափերի թույլատրելի առավելագույն շեղումը 1 սմ։ Գույն Կանաչ գույնի /երանգները համաձայնեցնել նմուշը ներկայացնելու ժամանակ/։ Կտորի բաղադրություն 100% բամբակ Կտորի տեսակը Futer, խտությունը նվազագույնը 290/մ2 Կար Թելի գույն- ըստ կտորի գույնի Հարթակար կարի խտությունը 3.5կկթ/սմ, լայնությունը 7-9մմ, թելը 150/2 den 100% պոլիէսթեր։ Մաքրակարերի թել 150/2 den 100% պոլիէսթեր, կարի խտությունը 3.5կկթ/սմ, նվազագույնը լայնությունը 0.6 սմ։ Փաթեթավորում Յուրաքանչյուր հավաքածուն պետք է փաթեթավորված լինի մեկ պոլիէթիլենային տոպրակով։ Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը Գնորդին |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ներկայացնել մատակարարման ենթակա ապրանքի նմուշը՝ համաձայն պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագրի: Չափսերը ըստ պատվիրատուի պահանջի: ապրանքը պետք է լինի որակյալ, անորակ ապրանքի դեպքում այն հետ կվերադարձվի |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Провиз в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՍՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/14 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 34 | | | | | |